AMX Armenia Stock Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2026 թվականի N ՑՊ-022-02/26

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ, ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ կողմից (այսուհետ նաև՝ Թողարկող) 2025թվականի դեկտեմբերի 22-ին ներկայացված հայտը 9,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, հիբրիդային/առաջին 36 ամիսների համար՝ հաստատագրված տարեկան 8.3%, այնուհետև՝ լողացող/ տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, 90,000 հատ անվանական, արժեկտրոնային, անժամկետ պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2026թվականի փետրվարի 18-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Օպերատորի Կանոնների 6-րդ գլխի 29-րդ կետը, 16-րդ գլխի 72-րդ, 79-րդ և 80-րդ կետերը, և, ղեկավարվելով 15-րդ գլխի 68-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.58.-րդ կետի 9.58.5. ենթակետով՝ Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2026թ փետրվարի 23-ից ցուցակել և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 9,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, հիբրիդային/առաջին 36 ամիսների համար՝ հաստատագրված տարեկան 8.3%, այնուհետև՝ լողացող/ տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, 90,000 հատ անվանական, արժեկտրոնային, անժամկետ պարտատոմսերը, որոնց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ կողմից շնորհվել է **AMUNIBB2UER0** ծածկագիրը, միաժամանակ թույլատրել դրանցով հասցեական առևտրի իրականացումը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված արժեթղթերին շնորհել **UNIBBU** բորսայական հապավումը:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:

4. Հայտերի (առաջարկների) ներկայացումը և գործարքների վերջնահաշվարկը կատարել ԱՄՆ դոլարով:

5. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ,
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ **ԵԼԵՆԱ ՄԵԼԻՔ-ՔԱՐԱՄՈՎԱ**